

Իւր տարիքին նայելով՝ պետք է որ *սիրահարի* դերը կատարէ:

Անկեղծաբար խօսելով, ուրախ ենք, որ յիշեալ վարդապետն այս քաջութիւնն ունեցած է եւ ազգին մեծ ծառայութիւն մատուցած է. երանի թէ ուրիշ կղերներն ալ Թարգմանեանի օրինակին հետեւէին եւ մտնէին այն ասպարէզին մէջ, որ իրենց սիրելի է:

Աւելի ուրախ պիտի ըլլայինք՝ եթէ Թարգմանեան Վարդավեանի խումբը մտնէր հոս, կամ Տփլիս երթար եւ ազգային ներկայացումներ տար:

**

Իգական սեռին ծովու բաղանիքին մէջ.

–Տիկին, չնայի՞ս ո՞վ է սա կինն:

–Ի՞նչպէս ճանաչեմ. գլուխը ծովուն մէջն է եւ ոտները միայն կ'երեւին ջուրին վրայ:

–Ադէկ ա՛, չվազե՞ս ազատելու... պիտի խղդուի...:

–Կէս ժամէն աւելի է, որ այդպէս կեցած է. եւ ես ալ կը կարծէի, որ իւր պզտիկ ոտները ցցունելու համար այդ դիրքով կեցած էր...:

20 Յուլիս

Սաստիկ տաք...:

Կնիկներն երկկներէ բաժնելու չափ տաք...:

Այսօր քանի մը կնաթողութիւններ տեղի ունեցան:

21 Յուլիս

Ջերմաչափն այսօր շուքի մէջ քառասունմէկերորդ աստիճան կը ցցունէ:

Այս տաքութիւնն կարծես հերիք չէր, եւ ահա կառավարութիւնն Պայագեղի հրապարակին վրայ դարձեալ մեծ քանակութեամբ թղթադրամ այրեց:

Աւելի լաւ չէ՞ր լինիր, որ կառավարութիւնն ձմեռուան պահէր այրուելիք թղթադրամները, որպէս զի ձմեռուան ցուրտ օրերուն մէջ խեղճ եւ աղքատ ժողովուրդը քիչ մը տաքնար:

Մէկ կողմէն ալ կ'խորհինք, որ կառավարութիւնն մեծ շռայլութիւն մը կ'ընէ այսպէս մոխիր դարձունելով իւր թղթադրամները, որոնք կրնան վառարաններու մէջ գործածուիլ: